## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 07 » փետրվարի 2020թ. № 20-Ա

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 58-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշման հավելվածի 4-րդ կետի փոփոխությունը.

**որոշում եմ.**

**1.** Լոռի Բերդ համայնքի բնակչին համայնքի բյուջեից հատկացնել սոցիալական օգնություն համաձայն հավելվածի:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2020թ. փետրվարի 07
գ. Լոռի Բերդ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2020թ. փետրվարի 07-ի № 20-Ա որոշման

# Ց Ու Ց Ա Կ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿՉԻ

1. Արարատ Գվիդոնի Մուրադյան – 25.000 ՀՀ դրամ, որդու երդման արարողությանը մասնակցելու կապակցությամբ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11 » փետրվարի 2020թ. № 21-Ա

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-009-0051-0038 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.176 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 06-009-0051-0038 ծածկագրով 0.176 հա մակերեսով տնամերձին տրամադրել ՝ գ. Ագարակ, 1-ին փող., 3-րդ նրբ., տուն 5 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2020թ. փետրվարի 11
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » փետրվարի 2020թ. № 22-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԸ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

**որոշում եմ.**

2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառներ փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Փոստի շենք՝ հասցեն գ. Ագարակ, փողոց 1, շենք 47
2) Ակումբի շենք՝ հասցեն գ. Ագարակ, փողոց 13, շենք 2
3) Կաթսայատան շենք՝ հասցեն գ. Բովաձոր, փողոց 1, շենք 26
4) Համայնքային կենտրոնի շենք՝ հասցեն գ. Բովաձոր, փողոց 3, շենք 6
5) Փողոցի կանգառի շինություն՝ հասցեն գ. Լեջան, փողոց 1
6) Խանութի շենք՝ հասցեն գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, շենք 3
7) Խանութի շենք՝ հասցեն գ. Լոռի Բերդ, Անդրանիկի փողոց, շենք 11
8) Փողոցի կանգառի շինություն՝ հասցեն գ. Կողես, փողոց 1
9) Վագոն-տնակ՝ հասցեն գ. Հովնանաձոր, փողոց 1/6
10) Խանութի շենք՝ հասցեն գ.Յաղդան, փողոց 1, շենք 33
11) Խանութի շենք՝ հասցեն գ.Յաղդան, փողոց 1, շենք 24
12) Համաբուժարանի շենք՝ հասցեն գ. Սվերդլով, փողոց 1, շենք 10
13) Փոստի շենք՝ հասցեն գ. Ուռուտ, փողոց 1, շենք 4
14) Ակումբի շենք՝ հասցեն գ. Ուռուտ, փողոց 1, շենք 11

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2020թ. փետրվարի 11
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » փետրվարի 2020թ. № 23-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-րդ կետին համապատասխան՝

**որոշում եմ.**

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի տարածքում տեղամասային կենտրոններ սահմանել՝
   1) դպրոցի շենքը (հասցեն՝գ. Ագարակ 1-ին փողոց, շենք 42 ),
   2 դպրոցի շենքը (հասցեն՝ գ. Բովաձոր 3-րդ փողոց, շենք 4 ),
   3)դպրոցի շենքը (հասցեն՝ գ.Լեջան 1-ին փողոց, շենք 1 )
   4) համայնքային կենտրոնի շենքը (հասցեն՝ գ.Լոռի Բերդ Աշոտ Երկաթ փող, 1-ին նրբ., շենք 2 )
   5) ակումբի շենքը (հասցեն՝ գ.Կողես Կենտրոն, շենք 2 )
   6) դպրոցի շենքը (հասցեն՝ գ.Յաղդան 1-ին փողոց, 1-ին նրբ., շենք 2 )
   7) բուժկետի շենքը (հասցեն՝ գ.Հովնանաձոր 1-ին փողոց, շենք 4 )
   8) դպրոցի շենքը (հասցեն՝ գ.Սվերդլով 1-ին փողոց, 7-րդ փկղ., շենք 1 )
   9) դպրոցի շենքը (հասցեն՝ գ.Ուռուտ 1-ին փողոց, 3-րդ նրբ., 1-ին փկղ., շենք 1 ):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 25 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կետնրոնների տարածքները տիրապետողներին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2020թ. փետրվարի 11

գ. Լոռի Բերդ